

552



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան



«14» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 030 - 25

Նախաձեռնող՝

«ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ

ք. Երևան, Բուզանդի փ., 91 շ., պարածք 72

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելու փ. հ 23  
հասցեում և Օրբելի եղբայրների փ. հ 27, 29 հասցեներում  
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում

Երևան, Արաբկիր վարչական շրջան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 030 - 25

«14» փետրվարի 2025թ.

**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելու փ. հ 23 հասցեում և Օրբելի եղբայրների փ. հ 27, 29 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն,  
նախագծային փաստաթուղթ  
Կատեգորիան՝ «Բ»  
Տեղադրման վայրը՝ Երևան, Արաբկիր վարչական շրջան

**Ներածական մաս.** «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող գործունեության նպատակն է ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան Օրբելու փ. հ. 23 և Օրբելի եղբայրների փ. հ. 27 և 29 հասցեներում գտնվող հողամասում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր (այսուհետ՝ Համալիր): Համալիրի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 7-ին տրված N 01/50-01-580-24 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի և հասարակական կառուցապատման: Հողամասը սեփականության իրավունքով (վկայական N 03042024-01-0098 և վկայական N 28102022-01-0075) պատկանում է կառուցապատող՝ «ՌԵՆՇԻՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն), զբաղեցնում է ընդհանուր 3.422297 հա մակերես:

Գործունեության ենթակա տարածքին անմիջապես հարում է Օրբելի փողոցը, ամենամոտ բնակելի շենքը հողամասի սահմանից գտնվում է 4.95մ հեռավորության վրա, Հրազդան գետը՝ 250 մ հեռավորության վրա: Տարածքն իրենից ներկայացնում է նախկինում շենք շինություններով կառուցապատված տարածք, որտեղ ներկայումս առկա է մեկ երկթև շինություն, ինչը համաձայն աշխատանքային նախագծի վերակառուցվելու է: Համաձայն ՇՄԱԳ-ին կից ներկայացված փաստաթղթերի՝ կառուցապատվող տարածքում առկա կիսակառուց շինությունների քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետի կողմից տրված քանդման թույլտվության համաձայն:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի, հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Գեոմորֆոլոգիական տեսակետից կառուցապատվող տեղամասը տեղադրված է Կոտայք-Արաբկիրյան հրաբխային սարավանդի սահմաններում, գտնվում է մեղմաթեք՝ մինչև 10-12° ձորակի հարավ-արևելյան մասում: Տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1030.7-1056.0 մ սահմաններում:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին



պլիոցենի դոլերիտա-բազալտային, լավային հաստվածքները, որոնք ուսումնասիրվող տեղամասում ունեն 50-100 մ հզորություն, ծածկված են ժամանակակից նստվածքներով՝ ներկայացված էյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ խոշորաբեկորային, կավային, ավազային և տեխնածին գրունտներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տեղամասում տարածված են միջլավային և լավատակի, մասամբ նաև վերին հատվածներում՝ շերտային տիպի ջրերը, որոնք ունեն համեմատաբար խորը տեղադրում:

Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից բարենպաստ է կառուցապատման համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում, բացակայում են: Տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը: Հողամասում առկա բուսահողը հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է հատուկ միջոցառումներով պահպանել:

Նախագծով նախատեսվում է կառուցել 5 բազմաբնակարան բարձրահարկ շենքեր, վերակառուցել գոյություն ունեցող հիվանդանոցային շենքը՝ հասարակական սպասարկման շենքի և այդ շենքին կից կառուցել գրադարան: Հողամասի հարավային կողմում նախատեսված 4 գրասենյակային շենքեր, իսկ Օրբելի փողոցին կից՝ հողամասի հյուսիսային հատվածում, ինչպես նաև հյուսիս-արևելյան հատվածում նախատեսվում է կառուցել հասարակական նշանակության շենքեր և 4 ստորգետնյա հարկեր՝ ավտոկայանատեղիներով և տեխնիկական տարածքներով: Կենտրոնական այգու տարածքում նախատեսվում են սրճարաններ և տաղավարներ: 5 շենքերը լինելու են 35 հարկանի, Օրբելի փողոցին հարող մասնաշենքը նախատեսված է մինչև 5 հարկ, հողամասի հարավ-արևելյան հատվածում տեղակայվածները՝ մինչև 6 հարկ, իսկ ուսումնական մասնաշենքը՝ մինչև 5 վերգետնյա հարկերով: Շենքերի դիրքի և հարևան շենքերի նկատմամբ լուսավորության հարցերը հիմնավորվել է կառուցապատողի կողմից ներկայացված ինսուլացիոն հաշվարկներով և համալիրի ինսուլացիոն ազդեցության վերաբերյալ մասնագիտական եզրակացությամբ, համաձայն որի՝ ըստ գործող նորմերի բավարարում է ինսուլացման տևողության պահանջներին/:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- տարածքի ընդհանուր մակերես - 3.422297 քմ,
- կառուցապատման մակերես - 13689.2 քմ /կամ հողամասի 40%/, որում՝ բարձրահարկ շենքերի կառուցապատման մակերես - 4951.0 քմ, բարեկարգման մակերես - 20533.8քմ/ 60% որում - անջրաթափանց մակերես (փողոց, մայթ, սալվածք) - 6844.6 քմ / 20%
- կանաչապատման մակերես - 13689.2 քմ / 40%
- բնակարանների քանակ - 1550 հատ
- ավտոկայանատեղիների քանակ - 1250 հատ:

Բնակելի համալիրի նախագծման հիմնական գաղափարը «քաղաք 15 րոպեում» հայեցակարգի մարմնավորումն է, որտեղ բնակիչները կարող են օգտվել իրենց առօրյա կարիքներից, իրենց տներից՝ կարճ հեռավորության վրա: Համալիրում բնակիչներին հասանելի կլինեն սպորտային և առողջական տարբեր հարմարություններ, ինչպիսիք են՝ լողավազանով մարզադահլիճը, ֆուտբոլի, բասկետբոլի և թենիսի համար նախատեսված բազմաֆունկցիոնալ դաշտը, մագլցման մարզասրահը, յոգայի կենտրոնը և պարասրահը: Համալիրը ներառում է հանդիպումների սենյակներ (ներառյալ՝ կոնֆերանսների դահլիճ), գրասենյակային տարածքներ և համատեղ աշխատանքային տարածքներ ստեղծելով բիզնես գործունեության համար բարենպաստ միջավայր: Համալիրում նաև կառուցվում է առևտրի



գոտի, բնակիչներին հասանելի կլինեն ժամանցի մի շարք տարբերակներ, այդ թվում՝ տեսախաղերի գոտի, պլանետարիում կամ կինոթատրոն, ինչպես նաև գեղեցկության և խնամքի ծառայություններ: Բակային հատվածում նախատեսվում են նաև խաղահրապարակներ, հանգստի ակտիվ և պասիվ գոտիներ, ճեմուղիներ, զրուցարաններ, կանաչապատ պուրակ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Շենքերի դիրքը ապահովում է բնական լուսավորություն՝ բոլոր ճակատներից, իսկ ճակատների ամբողջական ապակեպատումը բնակարաններում հատակից առաստաղ լույսի բացվածքներ է ստեղծում, ապահովելով բոլոր բնակելի սենքերի և խոհանոցների բնական լուսավորվածությունը: Արտաքինից շենքերի ծածկույթը լինելու է ապակյա՝ համադրված օդափոխվող ֆասադով:

Դեպի պատշգամբ ելք ունեցող բոլոր բացվածքները նախատեսվում է իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Վերելակներն, ինչպես նաև աստիճանավանդակների դռները նախատեսվում են հրակայուն ինքնափակման համակարգերով: Շենքերի տանիքները լինելու են հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով: Տեղադրվելու են հակահրդեհային ազդասարքեր, վահանակներ: Միջանցքներում և ավտոկայանատեղիներում նախատեսված է ծխահեռացում՝ տանիքում տեղադրվող օդամուղների միջոցով:

Շենքերի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

Ավտոկայանատեղիներից ներածման և արտածման համակարգերը տեղադրվելու են առաստաղի տակ: Օդափոխության համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր: Արտածումը կատարվելու է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Շահագործման փուլում բնակելի համալիրը, ինչպես նաև ստորգետնյա հարկերն ապահովված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով: Շենքերն ապահովված են լինելու տարհանման ելքերով: Բնակելի համալիրն ունենալու է միասնական ստորգետնյա ավտոկայանատեղի, որոնք ըստ անհրաժեշտության կարող են ծառայել բնակչության համար որպես թաքստոց:

Համալիրում նախատեսվում է ներդնել կենտրոնացված ջեռուցման և հովացման համակարգեր:

Բնակելի համալիրի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովմանն ուղղված միջոցառումները ներառում են հետևյալները.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սրբատաշ տրավերտինե սալիկներով, կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,
- շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,
- լուսավորությունը կատարվելու է «լեդ» տեսակի լամպերով:

Բնակելի համալիրի գազամատակարարումը կատարվելու է՝ համաձայն «Գազարոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի: Շենքերի տաք ջրամատակարարումը և ջեռուցումը



իրականացվելու է մեկ՝ կենտրոնացված կաթսայատնից:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարման նպատակով էլեկտրական սնունը կիրականացվի «Կարմիր 2» և «Ծիծեռնակաբերդ» 1110կՎ ՕԳ-ներից: Շենքերի էլեկտրամատակարարման նպատակով նախատեսվում է կառուցել ենթակայան: Էլեկտրաէներգիայի խնայողության նպատակով շենքերի տանիքում տեղադրվելու են 600վտ հզորության 236 հատ ընդհանուր քանակով արևային վահանակներ՝ 100կՎտ արտադրող էլեկտրաէներգիայի հզորությամբ:

Համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառուցվելու են նախագծերի և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի համաձայն: Զրամատակարարումը նախատեսված է իրականացնել «Մաքրավանի» ջրաղբյուրից, ջրահեռացումը՝ տարածքով անցնող՝ d=500մմ կոյուղատարով, իսկ հեղեղատարը կմիանա Կիկյան փողոցով անցնող՝ d=700մմ հեղեղատարին /առկա է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ նախնական համաձայնեցում/: Ավտոկայանատեղիում ջրամատակարարման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ դրենաժային սուզապոմպ:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 5 տարի՝ 60 ամիս: Շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները և տեխնիկական լուծումները նախատեսված են «Շինարարության կազմակերպման» նախագծի համաձայն և ներառված են ՇՄԱԳ-ում:

Շինարարական աշխատանքները ներառում են.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ՝ հանույթ և լիցք,
- շին-մոնտաժային աշխատանքների, հիմքերի իրականացում, ստորգետնյա հարկերի, հորաների կառուցում,
- ե/բ սալի աշխատանքներ, պատերի շարվածքներ,
- ենթակառուցվածքների անցկացում,
- հարդարման աշխատանքների իրականացում և այլն:

Շինհրապարակում նախատեսված է աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, տարբեր նշանակության շարժական տնակներ, սննդի ընդունման կետ, ջրամատակարարման պոմպ՝ մեքենաների անիվների լվացման համար, բիոզուգարան՝ լվացարանով, բետոնի ընդունման հարթակ, սեպտիկ հոր՝ կեղտաջրերի հեռացման համար, կենցաղային աղբամաններ և այլն:

Համալիրի կառուցման հողային աշխատանքների ժամանակ հողային հանույթ առաջանալու է շենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքներից: Հանվող՝ 3009585.39 մ<sup>3</sup> ընդհանուր հողային զանգվածից 150303.09 մ<sup>3</sup> ծավալն օգտագործվելու է հետլիցքի համար: Մնացորդային՝ 2859282.3 մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածը ժամանակավոր կուտակվելու է տարածքում և փորման աշխատանքների ավարտից հետո անմիջապես տեղափոխվելու է աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված: Հողային աշխատանքների ժամանակ 1500 մ<sup>3</sup> ծավալով հանվող բուսահողը օրենսդրական պահանջներին համապատասխան հավաքվելու և կուտակվելու է տարածքի հյուսիսային հատվածում (որտեղ բացառվելու է շինտեխնիկայի տեղաշարժը և հողի աղտոտումը), 2 մ բարձրությամբ թմբերով պահեստավորվելու է, այնուհետև, շինաշխատանքների ավարտից հետո օգտագործվելու է կանաչապատման նպատակով, իսկ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հողը ձեռք կբերվի պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում մեքենաների անիվների լվացման համար նախատեսված է 3 հատ հարթակ: Անիվների լվացումից առաջացած հրսբաջրերը



պլաստիկ վերգետնյա խողովակներով հեռացվելու են տարածքում տեղադրվող կեղտաջրերի հեռացման համար նախատեսված հոր, իսկ հողաավազային նստվածքը որպես շինաղբ հեռացվելու է: Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը նախատեսված է իրականացնել մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ պատրաստի վիճակում, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինհրապարակում ընդհանուր ջրասպառումը (ջրցանման, արտադրական և կենցաղային կարիքների համար) հաշվարկվել է 5,12 լ/վրկ: Տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների տնտեսակենցաղային կարիքների համար նախատեսվում է շինհրապարակում տեղադրել բիոզուգարաններ՝ լվացարանով, իսկ ավտոբետոնախառնիչի և ավտոբետոնամղիչի խողովակի լվացման համար նախատեսված է տեղադրել 5 խմ տարողունակությամբ ժամանակավոր պարզարան:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված կլինեն հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող փոշու և ծխագազերի արտանետումների հետ, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման և բետոնային աշխատանքների հետ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Շինարարության փուլի համար ՇՄԱԳ-ում իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկներ, համաձայն որոնց արդյունքների՝ արտանետվող վնասակար նյութերի չափաքանակները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում (չոր և շոգ եղանակներին),
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքների ժամանակ շինությունների ծածկում՝ փոշու տարածումը կանխելու նպատակով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից նախատեսված է շինհրապարակում և հարակից տարածքներում իրականացնել օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն ելակետային տվյալների հետ:

Շինարարության ընթացքում, պայմանավորված տարածքը խիտ բնակեցված լինելու հանգամանքով, հնարավոր է առաջանան սոցիալական ազդեցություններ և ժամանակավոր անհարմարություններ՝ հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի համար: Դրանց կանխարգելման կամ նվազեցման ուղղված միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում և ներառում են.

- հանրության իրազեկում՝ շինարարական աշխատանքների սկզբի, ավարտի, շինհրապարակի ձևավորման վերաբերյալ,
- շինհրապարակի հարակից տարածքներում մուտքերի սպառողական երթևեկելի



գոտիներում,

- տրանսպորտային երթևեկության համար երթերի քանակի և ժամանակացույցի սահմանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,
- թափոնների և շինարարական աղբի երկարատև կուտակումների բացառում,
- օդի որակի մոնիթորինգի սարքավորումների, աղմուկի և թրթռման չափիչ սարքերի տեղադրում,
- հարակից տարածքների ծառաթփային բուսականության պահպանում և խնամք,
- աղմուկի մակարդակի վերահսկում՝ երեկոյան ու գիշերային ժամերին աղմուկ առաջացնող աշխատանքների դադարեցում,
- բողոքների մատյանի վարում շինհրապարակում՝ հնարավոր խնդիրներից խուսափելու համար,
- շինհրապարակի տարածքում անվտանգության, բնապահպանության և սոցիալական հարցերով մասնագետների ներգրավում:

ՇՄԱԳ-ում ներկայացվել է Համալիրի կառուցապատման և շահագործման փուլի համար ճանապարհատրանսպորտային հոսքերի ազդեցության գնահատում՝ մոդելավորման եղանակով: Համաձայն ներկայացված հիմնավորումների՝ կառուցապատման ժամանակ ճանապարհատրանսպորտային հոսքերի վրա ազդեցությունը գնահատվել է 7-8% լրացուցիչ երթևեկության աճով: Համալիրի շահագործման փուլում նախատեսված ընդհանուր օգտագործման թաղամասային ավտոբուսները, հեծանիվների արահետները և կայանման գոտիները կարող են հանգեցնել տրանսպորտային հոսքերի կրճատմանը՝ 3-4%-ով, բերելով կանխատեսվող ազդեցության 50%-ից ավել կրճատմանը: Օրբելի փողոցի երթևեկությունը չձանրաբեռնելու համար նախագծով դիտարկվել է այլընտրանք՝ ճանապարհային հանգույց «գրպան», որը կհանդիսանա կառուցապատվող հողամասի ամբողջ երկայնքով երկրորդական փողոց՝ զուգահեռ Օրբելի եղբայրներ փողոցին, որտեղ երկգծանի երթևեկությամբ կապահովվի դեպի համալիր մտնող և համալիրից դուրս եկող մեքենաների հոսքը, նաև՝ ստորգետնյա ավտոկայանատեղիների ելքերն ու մուտքերը: Տրանսպորտային միջոցների համար որպես այլընտրանք նախատեսված է մուտեցում Այգեձոր փողոցի կողմից:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումները կլինեն կենտրոնացված կաթսաներից՝ ծխագազերի տեսքով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանալու հողային աշխատանքների ժամանակ՝ էքսկավատորը, իսկ շինարարության ավարտին՝ գլղոնը, որոնք միաժամանակ չեն շահագործվելու: ՇՄԱԳ-ում կատարվել է աղմուկի մակարդակի հաշվարկ, համաձայն արդյունքների՝ էքսկավատորի աշխատանքի դեպքում այն կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի աշխատանքի դեպքում՝ 11,8 դԲ, ինչը հանդիսանում է նորմայից ցածր ցուցանիշ: Շինարարության ընթացքում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են միջոցառումներ (այդ թվում՝ խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում և այլն):

ՇՄԱԳ-ում ներկայացվել են նաև շինարարության ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով շինհրապարակում քայուղերի և հեղուկ վառելիքի տարաները պահվելու են հատուկ հիմքերի վրա (ավագե, մետաղական կամ բետոնե), բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերի շրջակա տարածքներ,



իսկ նավթանյութերի արտահոսքը հնարավոր կլինի կանխել՝ ապահովելով շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

Շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման համար, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և ռիսկերը նվազագույնին հասցնելու նպատակով ևս նախատեսվել են միջոցառումների համալիր (որում ներառվել են նաև հակահրդեհային միջոցառումներ):

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև կառուցապատումից ազատ՝ 13689.2 մ<sup>2</sup> մակերեսով տարածքում (ներբակային գոտում և հարակից տարածքներում) կատարել կանաչապատման աշխատանքներ: Բնակելի համալիրի կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն: Կանաչապատման նպատակով տարածքում տնկվելու է գնդաձև իլենի 9 հատ, սոճի՝ 24 հատ, ալբիցիա՝ 35, բարբարիս՝ 49, ասպիրակ՝ 47, ֆորզիցիա՝ 73, խենոմելես՝ 46, լաբոռնում անագիրատերև՝ 5, կատալպա՝ 5, ձիակասկ՝ 25, սակուռա՝ 30 հատ, թզուկ վարդեր՝ 780 մ<sup>2</sup>, սամշիտ՝ 1060 գմ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց՝ ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կկապվեն ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

**Պարճառաքանական մաս.** Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված պահանջներին համապատասխան: Փորձաքննության գործընթացում դիտարկվել է կառուցվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման համապատասխանությունը՝ 2024 թվականին Երևանի համար մշակված և հաստատված գլխավոր հատակագծի դրույթներին (ինչը Օրենքի պահանջ է): Համաձայն գլխավոր հատակագծի՝ կառուցապատվող տարածքը գտնվում է խառը կառուցապատման գոտում, հատակագծով այլ սահմանափակումներ նշված չեն:

Համալիրի կառուցապատման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումները սահմանվել են օրենսդրական պահանջներին համապատասխան: Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումները նախատեսվել են՝ ելնելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներից: Շինարարության ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Շինարարության փուլի ջրօգտագործման, շինհրապարակից հոսքաջրերի և կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսվել են օրենսդրությանը չհակասող գործառույթներ և համապատասխան տեխնիկական լուծումներ: Քանի որ գործունեությունն իրականացվելու է արդեն իսկ կառուցապատված տարածքում, հողային ծածկույթի վրա ազդեցությունը զգալի չէ, տարածքում առկա հողաբուսաշերտի պահպանության համար նախատեսված են հատուկ միջոցառումներ: Նախատեսվել են էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովման միջոցառումներ: Տրանսպորտային գերձանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով առաջարկվել է տեղաշարժի կազմակերպման այլընտրանքային մեթոդներ և լուծումներ:

Շինարարության փուլի համար նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները, ներառյալ՝ աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ): Գործունեության





նախատեսվում է շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մշտադիտարկումներ: Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների, որոնք կիրականացվելու են շինարարական կազմակերպության կողմից, համար նախատեսված ծախսերը ընդհանուր գնահատվել են տարեկան 5.6 մլն ՀՀ դրամ:

ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքով ամրագրված պահանջներին և գործառույթներին համապատասխան: Փորձաքննության գործընթացում ներգրավված՝ ոլորտին առնչվող լիազոր մարմինների (քաղաքաշինության կոմիտե, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններ) կողմից գործունեության իրականացման վերաբերյալ ստացվել են դրական կարծիքներ՝ առանց դիտողությունների և առաջարկությունների: Փորձաքննական գործընթացում քաղաքաշինության կոմիտեի կողմից ստացված կարծիքում նշվել է, որ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ առարկություններ չկան, վերջնական եզրակացություն կտրամադրվի նախագծային փաստաթղթերի համալիր փորձաքննության արդյունքում:

Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջադրված դիտողություններով և առաջարկություններով, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի գրությամբ ներկայացված դիտարկումներով (որոնք վերաբերել են Օրբելի 33ա և Այգեձոր 78 հասցեների շենքերի ինսուլյացիոն հաշվարկներին և փողոցի թողունակության խնդրին և բարձրաձայնվել են 1-ին հանրային լսման ժամանակ) ՇՄԱԳ հաշվետվությունը վերադարձվել է Ընկերությանը՝ լրամշակման: Լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունն Ընկերության կողմից ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննական գործընթացը շարունակելու համար: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում ներկայացել են ինսուլյացիոն հաշվարկը՝ հիմնավորված համալիրի ինսուլյացիոն ազդեցության վերաբերյալ մասնագիտական եզրակացությամբ, համաձայն որի՝ ըստ գործող նորմերի, այն բավարարում է ինսուլյացման տևողության պահանջներին, և, մոդելավորման եղանակով ճանապարհատրանսպորտային հոսքերի ազդեցության գնահատումը՝ համալիրի կառուցապատման և շահագործման փուլերի համար:

Փորձաքննության փուլում Օրենքով սահմանված կարգով Արաբկիր վարչական շրջանում անցկացված երկրորդ հանրային լսման ընթացքում բարձրացվել են հարցեր՝ կառուցապատման տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների տեղափոխման, Օրբելի փողոցի երթևեկության ծանրաբեռնվածության, շինարարության ընթացքում աղմուկի պաշտպանության միջոցառումների և կառուցապատվող տարածքում նախատեսվող կանաչապատման լուծումների վերաբերյալ, որոնք հաշվի են առնվել նախաձեռնողի կողմից, ներկայացվել են լրացուցիչ հիմնավորումներ (գրավոր, բանավոր) և փորձաքննություն իրականացնող մասնագետի կողմից փորձաքննական եզրակացությունում ամրագրվել են որպես պարտադիր կատարման ենթակա փորձաքննական պահանջներ:

Փորձաքննության գործընթացում Օրենքով սահմանված ժամկետներում այլ դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Փորձաքննական եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լսումների արդյունքները: Հաշվի առնելով դրական կարծիքները և այն փաստը, որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված քաղաքային միջավայրում և շրջակա ու սոցիալական միջավայրերի վրա հնարավոր բացասական ազդեցություններն առնչվում են շինարարական աշխատանքների հետ՝ կրելով ժամանակավոր բնույթ, որոնք էլ կարող են բացառվել կամ մեղմացվել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի



պլաններում նախանշված միջոցառումների և գործողությունների արդյունավետ իրականացմամբ՝ հիմք են հանդիսացել Համալիրի կառուցման գործունեության վերաբերյալ պետական փորձաքննական դրական եզրահանգման համար:

### **Փորձաքննական պահանջներ**

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը.

1. Համալիրի համար պահանջվող ինժեներական ենթակառուցվածքներով ապահովման, ինչպես նաև գոյություն ունեցող ինժեներական ենթակառուցվածքների տեղափոխման շինարարական աշխատանքներն իրականացնել տեխնիկական պայմանների հիման վրա մշակված նախագծային փաստաթղթերին և սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

2. Շինարարության փուլում Օրբելի փողոցի երթևեկության կազմակերպման և բեռնատար տրանսպորտային հոսքերի համար մշակել նախագիծ/պլան՝ համաձայնեցնելով այն շահագրգիռ մարմինների հետ:

3. Շինարարական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասին քաղաքաշինության նախարարի 2008 թ. հունվարի 14-ի թիվ 11-Ն հրամանով հաստատված նորմերով և պահանջներով:

4. Շինարարության ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու առաջացումը և տարածումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, ջրցանում, շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն), ջրցանման համար որպես լրացուցիչ միջոցառում նախատեսել նաև թնդանոթ սարքավորումների կիրառում:

5. Շինարարության ընթացքում ապահովել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված պահանջների կատարումը (օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրում, հարակից տարածքների ծառաթփային բուսականության խնամք և այլն):

6. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

7. Տարածքի կանաչապատման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման բարեկարգման և արդիականացման նախագծի և ՇՄԱԳ-ում ներկայացված կանաչապատման լուծումներին համապատասխան՝ ապահովելով նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված հողամասի 40 % կանաչապատման մակերեսը և առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով՝ որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

8. Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել շինհրապարակում թափոնների և շինարարական աղբի կուտակումները):



9. Վերջնական նախագծման և կառուցապատման աշխատանքներում անհրաժեշտ է հաշվի առնել շենքերի և շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության լուծումները՝ համաձայն Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N°426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելու փ. հ. 23 հասցեում և Օրբելի եղբայրների փ. հ. 27, 29 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Տերիքնազ Մկրտչյան